ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԱՅՆ ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԻ ՀԱՄԱՐ, ՈՐՏԵՂ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Ի՛ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ Է 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-ԻՆ, ԺԱՄԸ 08:00-ԻՑ ՄԻՆՉԵՎ 20:00-Ն



Հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամին ներկայացրե՛ք Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը և անցե՛ք նշմարման ընթացակարգ:

Քվեարկության շենք մուտք գործելու և քվեարկությանը մասնակցելու իրավունք չունեք, եթե.

- ✔ չներկայացնեք Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայական կամ Վրաստանի քաղաքացու անձնագիր,
- ✔ պարզվի, որ ունեք նշմարում:

Հոսքը կարգավորող հանձնաժողովի անդամի ցուցումով քվեարկության սենյակում մոտեցե՛ք ցանկացած այն գրանցման սեղանին, որտեղ չկա երկուսից ավելի ընտրող:

Գրանցում իրականացնողին ներկայացրե՛ք Վրաստանի քաղաքացու անձը հաստատող վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը: Գրանցում իրականացնողը ընտրողի անձը հաստատող վկայականը ներմուծում է ստուգող սարքի ընթերցողի մեջ:

Եթե անձը հաստատող վկայականը էլեկտրոնային չէ, կամ ներկայացրել եք Վրաստանի քաղաքացու անձնագիր, գրանցում իրականացնողը ձեր տվյալները սարքի մեջ ձեռքով կներմուծի:

Ստուգող սարքի կողմից ընտրողի տվյալների համապատասխանությունը հաստատելու դեպքում ընտրողների գրանցում իրականացնողի մոտ կատարե՛ք նշմարում:

Եթե հրաժարվում եք անցնել նշմարման ընթացակարգ, ձեզ իրավունք չի տրվի մասնակցելու քվեարկությանը:

Ստորագրե՛ք ընտրողի ստուգման սարքից տպված ընտրողի գրանցումը հաստատող կտրոնի վրա: Գրանցում իրականացնողից ստացե՛ք քվեաթերթիկը և քվեարկության համար հատկացված հատուկ շրջանակ-ծրարը:

Ձեզ փոխանցված քվեաթերթիկի վրա, գրանցում իրականացնողի ցուցումով, հատուկ նշիչով գունավորե՛ք փորձնական շրջանը:

Տեսողությունից զուրկ ընտրողը քվեաթերթիկը ինքնուրույն լրացնելու համար գրանցում իրականացնողից կարող է ստանալ հատուկ շրջանակ-ձև:

Թույլ տեսողություն ունեցող ընտրողը քվեաթերթիկը ինքնուրույն լրացնելու համար գրանցում իրականացնողից կարող է ստանալ խոշորացնող ոսպնյակ:

Խուլ ընտրողը քվեարկության գործընթացի մասին տեղեկություններ ստանալու համար կարող է օգտվել ժեստերի լեզվին տիրապետող օպերատորի ծառայությունից, ԿԸՀ-ի կայքում գրանցում անցնելուց հետո:

Գաղտնի քվեախցիկում հատուկ նշիչով (մարկերով) քվեաթերթիկում գունավորե՛ք ձեզ համար ցանկալի միայն մեկ ընտրական սուբյեկտի դեմ եղած շրջանակը: Լրացրած քվեաթերթիկը զետեղե՛ք քվեարկության համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարի մեջ:

Եթե չեք կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկը, իրավունք ունեք ձեզ օգնելու համար քվեախցիկ հրավիրել ցանկացած անձի, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամի, թեկնածուի, ընտրական սուբյեկտի ներկայացուցչի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցչի և դիտորդի: Եթե փսասել եք քվեաթերթիկը դիմե՛ք ընտրական հանձնաժողովի նախագահին, նրան փոխանցե՛ք փսասված քվեաթերթիկը և պահանջե՛ք նոր քվեաթերթիկ:

Քվեախցիկից դուրս գալուց հետո քվեարկելու համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարի միջոցով քվեաթերթիկը ներմուծե՛ք ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մեջ:

Ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքը և հատուկ շրջանակ-ծրարները վերահսկող հանձնաժողովի անդամը, անհրաժեշտության դեպքում, ձեզ օգնություն կցուցաբերի ձայները հաշվելու համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարի միջոցով ձայները հաշվելու հատուկ էլեկտրոնային սարքի մեջ քվեաթերթիկը ներմուծելու գործընթացում:

Նրանից հետո, երբ քվեաթերթիկը կհայտնվի քվեատուփի մեջ, ձայները հաշվելու համար նախատեսված հատուկ շրջանակ-ծրարը տեղադրե՛ք դրա համար հատկացված սեղանի վրա և դուրս գնացե՛ք ընտրատեղամասից:

ՑԵՍԿՈ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ, ՌԵՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Հարմարեցված է ժեստերի լեզվով և հնչյունավորված է տեսողությունից զուրկ ընտրողների համար